



1. Ո՛վ Տէր, պահէ սիրտս օրէ օր
Սուրբ արեան տակ, (2)
Վերցուր վախ ու մեղքերս բոլոր
Թանկագին արեան տակ:

Արեան տակ, անգին արեան տակ,
Բժշկող, մաքրող արեան տակ,
Տէր, պահէ սիրտս ամէն օր
Թանկագին արեան տակ:

2. Մեղաւորաց կայ ապաստան
Սուրբ արեան տակ, (2)
Հոն հաւատքով կարդարանան
Թանկագին արեան տակ:

3. Ո՛վ Տէր, Հոգիս Քեզմով լեցուր
Սուրբ արեան տակ, (2)
Կամքդ ընելու ինծի շնորհք տուր
Թանկագին արեան տակ:

4. Խաղաղութիւն կ'լեցնէ զիս
Սուրբ արեան տակ, (2)
Կողողէ սէրն Տերոջ հոգիս
Թանկագին արեան տակ:

5. Սուրբ Հոգին զիս ժամէ ի ժամ
Սուրբ արեան տակ, (2)
Կը սրբէ, որ մաքուր ըլլամ
Թանկագին արեան տակ: